ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/4

16 մայիսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 29 անդամներ:
Բացակա էին՝ Կալիպսե Ասատրյանը, Վահան Հունանյանը, Զոյա Միքայելյանը, Վարդգես Սամսոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետերը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Սանոյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Կարեն Բաղալյանը:

Հայտարարությամբ հանդես եկավ Գյումրի համայնքի ավագանու անդամ Գոռ Մանուկյանը. նա կոչ արեց համայնքի բնակիչներին միանալ «Շիրակն հանուն հայրենիքի» շարժմանը:

ԼՍԵՑԻՆ

1. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

(Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՍԱՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում** է.
Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 102-Ա)*

ԼՍԵՑԻՆ

2. ***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 200 000 000 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՄԻԼԻՈՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասի» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի երկրորդ եռամսյակի համար նախատեսված 396 371 100 (երեք հարյուր իննսունվեց միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ հազար հարյուր) Հայաստանի

Հանրապետության դրամից 200 000 000 (երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվու է որոշում N 103-Ա)*

ԼՍԵՑԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Հատկացնել 4 000 000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավարտական խմբերի և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4261) «Գրասենյակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 104-Ա)*

ԼՍԵՑԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց», «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց», «Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 1 արվեստի դպրոց», «Գյումրու մանկիկ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝

կազմակերպություններ) տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2024 թվականի ապրիլի 19-ին N 7166, ապրիլի 25-ին N 7425, ապրիլի 25-ին N 7441 ,ապրիլի 26-ին N 7547,ապրիլի 15-ին N 6856, մայիսի 07-ին 8005 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպություններին գույքի ձեռք բերման և ընթացիկ վերանորոգման նպատակով, որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից հատկացնել 2 387 000 (երկու միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել համապատասխան գործառական դասակարգմանը՝ համաձայն հավելվածի՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 105-Ա)*

ԼՍԵՑԻՆ

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 135 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով սոցիալապես անապահով թվով 135 (մեկ հարյուր երեսունհինգ) քաղաքացիների՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Թվով 135 (մեկ հարյուր երեսունհինգ) անձանց որպես դրամական օգնություն հատկացնել 1 550 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 106-Ա)*

ԼՍԵՑԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՎ ՌԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Գայանե Գրիգորյանը խնդրել է ամուսնու՝ Ալեքսանդր Գրիգորյանի և սկեսրոջ՝ Ռիմա Գրիգորյանի գերեզմանոցի հիմքերի կառուցման աշխատանքների համար հատկացնել գումար: Գայանե Գրիգորյանը ապրում է սոցիալապես անապահով վիճակում և իր խնամքի տակ գտնվում են երկու

անչափահաս երեխաներ: Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հավերժ հիշատակ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Բաղրամյանի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի ապրիլի 11-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1. Ընկերությանը հատկացնել 133 300 (մեկ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ Ալեքսանդր և Ռիմա Գրիգորյանների գերեզմանոցի հիմքերի կառուցման աշխատանքների համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Բաղրամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 107-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով. **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 283-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. 1) 2-րդ կետով հաստատված N 25 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հունիսի 1-ից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 108-Ա)*

ԼՍԵՑԻՆ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին

մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և քաղաքացիներ Կարինե Հարությունյանի 31.10.2023թ. N23510, Ազատ Բաղդասարյանի 07.11.2023թ. N23992, Մերի Եղոյանի 20.11.2023թ N24926, Էլիզա Թորոսյանի լիազորված անձ՝ Կարլեն Թորոսյանի 04.03.2020թ. N3342, Մարիամ Հարոյանի 28.09.2023թ. N20532,Ագնեսա Խաչատրյանի 08.0.2012թ. N3777, Սերգեյ Գալստյանի 24.08.2015 N 10388 և 01.06.2023 N10799 թվագրումներով դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 109-Ա)*

ԼՍԵՑԻՆ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 110-Ա)*

ԼՍԵՑԻՆ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑԻ № 40/2 ՀԱՍՑԵԻ 18.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գորկու փողոց № 44 հասցեի 254.92 (երկու հարյուր յոթանասունչորս ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Լաուրա Սերոբի Գրիգորյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20012021-08-0006 համարի վկայական, տրված 20-ը հունվարի 2021 թվականի): Քաղաքացի Լաուրա Սերոբի Գրիգորյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30042024--08-0048 վկայական) Շիրազի փողոցի № 40/2 հասցեի 18.22 (տասնութ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով

բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Լաուրա Սերոբի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 24-ին № 17621 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Քաղաքացի Լաուրա Սերոբի Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գորկու փողոց № 44 հասցեի 254.92 (երկու հարյուր յոթանասունչորս ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Շիրազի փողոցի № 40/2 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 18.22 (տասնութ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 453477 (չորս հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լաուրա Սերոբի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 111-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 158 ՀԱՍՑԵԻ 13.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 158/3 ՀԱՍՑԵԻ 13.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158/3 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03052024-08-0045 վկայական): Քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ վերը նշված հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06052024-08-0040 վկայական) Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակելու խնդրանքով: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի

Արման Գրիգորի Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 06-ին N 7879 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158/3 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակության միջոցով օտարելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112-Ա)*

ԼՍԵՑԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 17/5 ՀԱՍՑԵԻ 11.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի № 21 հասցեի 311.23 (երեք հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24102023-08-0038 վկայական): Քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08052024-08-0030 վկայական) Տիգրանյան փողոցի № 17/5 հասցեի 11.44 (տասնմեկ ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 26-ին № 3855 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի № 21 հասցեի 311.23 (երեք հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Տիգրանյան փողոցի № 17/5 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 11.44 (տասնմեկ ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային

արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 78180 (յոթանասունութ հազար մեկ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

ԼՍԵՑԻՆ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈՒՆՑԻ ՓՈՂՈՑ № 3/6 ՀԱՍՑԵԻ 18.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի 3 շենք № 4 հասցեի 123.48 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Անահիտ Ջանիբեկի Աբրահամյանին (3/4մաս) և Գրիգոր Մամիկոնի Աբրահամյանին (1/4մաս) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30122020-08-0030 վկայական): Քաղաքացիներ Անահիտ Աբրահամյանը և Գրիգոր Աբրահամյանը դիմել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01042024-08-0072 վկայական) Գոգունցի փողոցի № 3/6 հասցեի 18.23 (տասնութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիներ Անահիտ Աբրահամյանի և Գրիգոր Աբրահամյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 10-ին № 22483 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1. Քաղաքացիներ Անահիտ Ջանիբեկի Աբրահամյանին (3/4 մաս) և Գրիգոր Մամիկոնի Աբրահամյանին (1/4 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի 3 շենք № 4 հասցեի 123.48 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Գոգունցի փողոցի № 3/6 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 18.23 (տասնութ ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց,

ընդամենը՝ 191670 (մեկ հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անահիտ Աբրահամյանին և Գրիգոր Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114-Ա)*

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N266-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Հայաստանի **Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերն օտարելու մասին» N266-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) հավելվածի 8-րդ կետի 6-րդ սյունյակի «86403» թիվը փոխարինել «308063» թվով, 8-րդ սյունյակի «1056033» թիվը փոխարինել «1606130» թվով և 11-րդ սյունյակի «11(հին)» թիվն ու բառը փոխարինել «12» թվով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 115-Ա)*

ԼՍԵՑԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԵՎ «ԱՄԵՆԱՓՐԿԻՉ» ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՊՈՒՐԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՌԵՐԸ ՆՈՐ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան փողոցում, Սուրբ «Ամենափրկիչ» եկեղեցու հարակից պուրակում և Շահումյան փողոցի 188 հասցեի շենքի բակում առկա են կենսունակությունը կորցրած բարդի տեսակի ծառեր, որոնք խոչընդոտում են տվյալ տարածքներում իրականացվող շինարարական աշխատանքներին: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով մասնագիտական խմբի եզրակացությունը ՀՀ կառավարության և 2024թ. մայիսի 3-ին հարցի վերաբերյալ համայնքապետարանում կայացած հանրային բաց լսման և քննարկման արձանագրությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Աբովյան փողոցի հիմնանորոգվող հատվածում (Վարդանանց հրապարակից մինչև Մայակովսկու փողոց), Սուրբ «Ամենափրկիչ» եկեղեցու հարակից պուրակում (Շահումյան փողոցի 188 շենքի բակ) առկա թվով 51 հատ կենսունակությունը կորցրած ծառերը փոխարինել նոր առավել արժեքավոր և գեղազարդ ծառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախքան հարցի քվեարկությանն անցնելը ավագանու անդամ Կարեն Մալխասյանն առաջարկեց տասնհինգրոպեանոց ընդմիջում անել՝ հարցի քվեարկության վերաբերյալ ավագանու անդամներին իր տեսակետը ներկայացնելու համար: Քանի որ պահը համընկել էր հիմնական ընդմիջում առաջարկելու հետ, նիստը վարողն ընդմիջում անելու հարցը դրել էր քվեարկության: Նիստն ընդմիջվել էր 30 րոպեով:

Կողմ-22 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 116-Ա)*

ԼՍԵՑԻՆ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս.ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 8-րդ կետերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Անվանափոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող Ս.Մուսայելյան փողոցը՝ «Շառլ Ազնավուրի փողոց»:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ իրականացնել անհրաժեշտ գործողություններ կապված փողոցի անվանափոխման հետ այդ թվում նաև անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման աշխատանքները:

3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ապահովել անվանատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացվող ակտերի:
4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո օրենքով սահմանված կարգով ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար:
5. Սույն որոշմամբ կատարված փողոցի անվանափոխման վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Շիրակի մարզային վարչության «Մուշ» և «Կումայրի» բաժններին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության «Մուշ» և «Կումայրի» անձնագրային բաժանմունքներին, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանմանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 117-Ա)*

ԼՍԵՑԻՆ

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 153-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Սևան Ամիրյանի կողմից տրված

գրությունը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 07-ին N 7949 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 120-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 153-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Սևան Ամիրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 118-Ա)*

ԼՍԵՑԻՆ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՎԱՐԴԵՎԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով, 14-րդ հոդվածի 3-րդ մասով, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 13-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 119-Ա)*

ԼՍԵՑԻՆ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԼՈՒՍԻՆԵ ՍԱՆՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 96-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 26-ը՝ ժամը՝ 12:00:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 120-Ա)*

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հունիսի 26-ը՝ ժամը՝ 12:00:

Որոշումն ընդունվեց:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Գ.Մելիքյան_____

Լ.Սանոյան_____

Մ.Սահակյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ա.Հովհաննիսյան_____

Թ.Համբարձումյան_____

Ն.Պողոսյան_____

Գ.Պասկևիչյան_____

Խ.Վարաժյան_____

Ս.Հովհաննիսյան_____

Հ.Ասատրյան_____

Ս.Խուբեսարյան_____

Ա.Բեյբուտյան_____

Ա.Պապիկյան_____

Հ.Նիկողոսյան_____

Ք.Հարությունյան_____

Ե.Խանամիրյան_____

Ն.Ղազարյան_____

Ա.Մաթևոսյան_____

Շ.Արամյան_____

Լ.Մուրադյան_____

Հ.Ստեփանյան_____

Գ.Մանուկյան_____

Կ.Սոսյան_____

Ս.Ադամյան_____

Կ.Մալխասյան_____

Ն.Միրզոյան_____

Հ.Մարգարյան _____

Վ.Հակոբյան_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՆՈՅԱՆ

ք.Գյումրի
«16» մայիսի, 2024 թվական